## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

*Ապրանքի ծագման տեղանուններ*

---

**Գրանցման համար** 11.1
**Հայտի համար** 2014006
**Հայտի ներկայացման թվականը** 29.05.2014
**Ծագման երկիրը** GE
**Գործողության երկարաձգման թվական** 10.07.2034
**Երկարաձգված գործողության ավարտ** 29.05.2034
**Հրատարկվող տեղանունը** ՄՈՒԿՈՒԶԱՆԻ, МУКУЗАНИ, MUKUZANI, მუკუზანი
**ԱԾՄԴ-ի դասը** 33
**Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը** գինի
**Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝**
«ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» ծագման տեղանվամբ վերահսկվող բարձրորակ կարմիր չոր գինի:
«ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» գինին բնութագրվում է նռնագույն երանգով, համը՝ հագեցած, ներդաշնակ, թավշային, նուրբ, արտահայտված յուրահատուկ բույրով և ծաղկեփնջով, բարձր մզվածքային:
«ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» գինու քիմիական տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ ցուցանիշներին.
սպիրտի ծավալային պարունակությունը՝ 10,5-12,5%
շաքարի զանգվածային խտությունը՝ 3գ/դմ$^3$ ոչ ավել
տիտրվող թթվությունը՝ 5,0-7,5 գ/դմ$^3$
ցնդող թթուներ՝ 1,2գ/դմ$^3$ ոչ ավել
էքստրակտի զանգվածի բերված խտությունը՝ 20 գ/դմ$^3$ ոչ պակաս
ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածային խտությունը՝ 160 մգ/դմ$^3$ ոչ ավել
ազատ ծծմբի երկօքսիդի խտությունը՝ 30 մգ/դմ$^3$ ոչ ավել:
**Կապն աշխարհագրական ծագման հետ՝ ծագման տեղանվան կամ աշխարհագրական նշման դեպքում՝**
Մուկուզանի միկրոշրջանում հումքային բազայի տարածքները կազմում են մոտ 246 հա:
Սպասվելիք բերքը միկրոշրջանում՝ միջինում սպասվում է 1600 տոննա, 1 տոննայից 65 դեկալիտր ստանալու դեպքում կարելի է ստանալ 104000 դեկալիտր գինենյութ:
«ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» – աշխարհագրական դիրքը՝ Ցիվ–գոմբորյան լեռնաշղթայի հյուսիս – արևելյան լանջ: Միկրոկլիման, ստեղծված օդի սառը հոսանքներով՝ ցած իջած սառույցով պատած Կասկասիոնիի գագաթներից: Կարբոնատային և լյոսային կավի, քարա–ավազային, ալյուվիալ ծածկույթներ, «Սապերավի» տեսակի էկոհարմարվողականությունը բնորոշում է «ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» գինու եզակի հատկությունները:
**Աշխարհագրական գոտին՝** խաղողագործության յուրահատուկ տարածք է, որը գտնվում է Արևելյան Վրաստանի Շիդա Կախեթիում կիրճի աջ լանջին Ալազանի գետի Գուրջաանի շրջանում ուղղված լայնությամբ, Ցիվ–Գոմբորյան լեռնաշղթայի հյուսիս–արևելյան լանջին 41°48′ հյուսիսային լայնության և 45°44’ արևելյան երկարության կոորդինատներով, 350-750 մ ծովի մակերևույթից բարձր: Հումքի բազան լիովին ներառում է Դեդոպլիս Զվարի տարածքները, Պապրի, Դամանարչենի, Նադարբազևի հովիտները, Զագաանի, Մուկուզանի գյուղերը, Չումլակի, Վելիցղիխե և Վազիբուանի տարածքների մասը: Այստեղ ռելիեֆի կազմությունը ներկայացված է թույլ թեքությամբ լանջերով, որոնք համարյա հարթության հասնող բլրոտ և ալիքներով տեղանքներ են: